



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ Ա 963
«26» 02 2010թ.

0078 Երևան, Չալարյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

**ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Դանիելյանին**

Ի պատասխան 2եր 2010թ. փետրվարի 3-ի
10-04 թվակիր նամակի

Հարգելի պարոն Դանիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հրատապ հաշվետվության քննարկմամբ, ինչը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հանձնարարավել էր քրեակատարողական վարչությանը, հայտնում ենք, որ սույն թվականի փետրվարի 2-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում բուժվող դատապարտյալներ Հ.Վ. [redacted] Վ. [redacted] ի և Ս. [redacted] Հ. [redacted] ի զննության և ներկայացված բժշկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից, ախտորոշումը ճշտելու նպատակով, որոշվել է կազմակերպել լրացուցիչ հետազոտություն:

2010 թվականի փետրվարի 16-ին դատապարտյալ Հ.Վ. [redacted] ը լրացուցիչ հետազոտվել է «Գապեկս» ակնաբուժական կլինիկայում, որի կապակցությամբ հայտնում ենք, որ Հ.Վ. [redacted] ի հիվանդության ախտորոշումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման հավելված 2-ով հաստատված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

Ինչ վերաբերվում է Մ.Հ. [redacted] ն, ապա նա 2010 թվականի փետրվարի 3-ին կտրականապես հրաժարվել է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից նշանակված հետազոտումից, որի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն, սակայն 2010 թվականի փետրվարի 23-ին դատապարտյալը տվել է իր

գրավոր համաձայնությունը առաջարկված հետազոտության համար և համապատասխան հետազոտություն անցկացնելուց հետո միայն հանձնաժողովը կկայացնի որոշում:

Իմ կողմից երկու անձանց վերաբերյալ էլ գործընթացները վերցված են հսկողության տակ, մասնավորապես, իմ օգնականը հանդիպել է դատապարտյալ Մ.Հ. [redacted] ի հետ, որը հայտարարել է, որ վերջինս գործնականում ոչ թե հրաժարվում է բժշկական զննություն անցնելուց, այլ ի վիճակի չի լինում, քանի որ նախապես իրեն չեն հայտնում ակնկալվող բժշկական հետազոտության մասին:

Հարգանքով՝


Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ